հօրը՝ Ղուկասի հետ կ'ուղևորի Պոլիս 1871ին. ժամանակ մը կ'աշակերտի Օրթագիւղի, Պալատի և Ղալաթիոյ վարժարաններու մէջ։ 1885ին կը մտնէ Ս. Յակոբի ժառ. վարժ.ը և ընթացաւարտ կ'ըլլայ 1888ին։ Նախ օգն. դիւանապետի և յետոյ կը կարգուի դիւանապետ պատրիարքարանի (1889—1914). Զո. 1892ին. ուսուցիչ գեղագրութեան, կրօնի և այլ ճիւղերու ժառ. վարժ.ի մէջ (1902—1906). անգամ զանձատան մասնախումբի 1905է սկսեալ, շատ անգամներ անդամակցած է Տն. Ժողովի և մինչև ցայսօր կը մնայ նոյն պաշտօնով։ Յարութիւն վրդ. ունի ընդօրինակութիւններ և գծագրութիւններ, մասնաւորապէս ինք կը պատրաստէ հանդուցեալ միաբանաց տապանագիրներու գծագրութիւնները։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՍԱՀԱԹՃԵԱՆ, ԱՄԱՍԻԱՑԻ.—Մբ. Առ. Դամասկոսի. 1834–1842. (Վրթ. ՄՁ. անթիւ)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՍԵԲԱՍՏԱՑԻ.— Մբ. կը միաբանակցէր 1793 ին։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՍԵՐՈՎԲԷԵԱՆ, ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ.— Մբ. նախապէս միաբան Արղնու վանքին. յետոյ կը միաբանակցի Ս. Յակոբի վանքին և կ'ընտրուի Առ. Դամասկոսի, ուր եւ վախճանի 1845 ին, ինչպէս յայտնի է իր տապանագիրէն։ Լատինք Բեթղեհէմի մէջ 1814 ին Հայոց եկեղեցիին մէջէն Ս. Այրը իջնելու համար դուռ մը բացած էին ապօրէն կերպով. հայերը բողոքեցին այդ ապօրինութեան դէմ. Լատինք այդ առթիւ կոիւի բռնուեցան Հայոց հետ եկեղեցիին մէջ։ Տեղի ունեցած այն չփոթներու մէջ Յարութիւն վրդ. երբ տակաւին պարզ միաբան մըն էր, ծանրապէս վիրաւորուեցաւ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՍԿԻՒՏԱՐՑԻ.— Մբ. 1803ին Ճառաձի։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ.— Մբ. ՌՃՁԸ (=1739) թուին, Ս. Յակոբի վանքին մէջ կ'ընդօրինակէ Մաշտոց մը (ՄՁ. Թ. 676) Գաբրիէլ եպս.ին համար։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎՐԴ. ՎԱՀՐԱՄԵԱՆ, ՕՁՆԵՑԻ.— Մբ.? Երուսաղէմի նուիրակ Ալիքսիանոս վրդ.ին գործին դիւրացման և արդիւնաւորման համար մեծ ջանքեր ըրած է. մնա. Գրիգոր Թահիր Քալանթարեան Ղարաքիլիսէէն նամակով մը (1814